



25. ՖԱԼԱՔ

Կըլնի շիլնի մի մարդ, մի կնիկ: Մրանք իրանց յաշն առած
հըլնեն, պտուղ էլ, որ ասես, չեն ունենա:

Մարդը կնկանը կասի.—Ա՛յ կնիկ, ես միտք եմ արե՛ էթամ
Երուսաղեմ՝ ովստ. իմ ֆոգուն էլ ա վարձք, քու ֆոգուն էլ, ի՛նչ
կասես:

— Ա՛յ քա, — կասի կնիկը, — տենո՞ւմ ես իմ ոտք ծանդր ա՛
ըսօր, էզուց պտի ազատվեմ, իմ պահող-պահպա՞նողն ով ա, որ
գու էլ թողում ես, էթում, անշախ ա ասսու աշքը քաղցրացեց վըր-
ներս, մեզ պտուղ ա տալի, բա առանց քեզ ես ի՛նչ պտի անեմ:

Էս մարդն ա՛ կնկա ասածը ըսկի այնումը շի քցի, ճամփի թա-
գարեք կտենա, կընկնի ճամփա դպա Երուսաղեմ:

Թող սա էթա, գանք խարարը տանք սրա կնկանիցը:

Մի օր սրանց գեղի շորանը կմննի նեքսե, կտենա իրա խա-
նումը պառկած ա: Միտք կանի՛ շըլնի թե հիվանդ ա:

Աշքը է՛ս դիճը, է՛ն դիճը կքցի, կտենա խանմի կողքին մի
պուճուր, նոր էլած քորփա էրեխսա: Նոր գլխի կընկնի, որ ազատ-
վել ա: Հենց ինքն էլ էկել էր մուշտովուղ տալու, որ նրանց ոշ-
խարը ծնել ա: Էլ բան շի ասի, ուսուղով էդ էրեխսեն վե կոմի, կտա-
նի կդնի ոշխարի տակը, ոշխարի տակի գառը կբերի շորի մեջ կկո-
լուի, կդնի խանմի կողքը, սուս ու փուս կթողա կէթա իրա բանին:

Խեղճ ծննդկանը մի վախտ աշքը բաց կանի, ի՞նչ կտենա՞
իրանից մի սիրուն, նաշխուն գառ ա էլե. էլ ձեն ժպտոն լի հանի,
ասսուն փառք կտա, էդ գառովը կինդա, կուրախանա:

Մրան թողանք ըստե, գանք խարար տանք էն խեղճ էրեխուցը:
Էս շորանն ա' ամեն օր էրեխեն կտանի էն ծնած ոյշարի տա-
կը կդնի, ոյշարը կլիզի, ծիծ կտա, էլ եղ վե կոնի կտանի տում-
ըսենց կպահի ընշանք էրեխեն կդառնա մի տարեկան: Որ մի տա-
րեկան կըլնի, վե կոնի, կտանի կքցի մի մութը օթախ, դուրը վրեն
կշինի, ընդե կպահի: Հսենց անց կկենա թամամ օխտը տարի:

Մի օր իրիկոնը էս շորանը իրա սուրուն աղաքն արած կգա
գեղը. էդ կնկա տան աղաքովը անց կկենա: Հենց էդ վախտը էդ
կնիկը իրա Գառն-էրեխու հեննա բուշի դռանը նստած կըլնի: Գա-
ռոր սուրուի միջին իրա մորը կտենա, ալրիալը կվազի դպա մերը:
Խեղճ կնիկը կմնա մաթ էլած էդ Գառան վրեն մտիկ տալոն, շի
իմանա' էս ի՞նչ բաս ա: Նոր ըստե շորանը էդ կնկանը մին-մին
նաղլ կանի իրա արածը, թե բա շես ասի՛ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց
բան: էն սհաթը էիթա էրեխեն պահած տեղիցը կհանի, կրերի
կտա նրան ¹: Մերը իրա էրեխուն օր տենում ա, ուրախությունիցը
շի իմանում ինչ անի. խտըտում ա, պաշազորում ա, ուրախ-ուրախ
տանում ա տոն:

Խեղճ էրեխեն օխտը տարի ըսկի արենի էրես շէր տեհե. շէր գի-
տա, թե աշխարքումը ի՞նչ կա, ի՞նչ չկա, մեռնիլ կա, ապրիլ կա:
Ըստոնք որ իմացավ՝ շատ տիրեց, դարտ արեց. միտք արեց գույք
առնի, էթա էն թավուր երկիր, որ մարդ ո՞նչ ծերանում ա, ո՞նչ
էլ մեռնում: Գնաց է՛ս դիհն ընկավ, սրա՛ն հարցրեց, նրա՛ն հարց-
րեց, վերը որ շատ հարց ու փորձ արեց, ասեցին.—Ֆալաթի կուշտն
ո՞վ էթա, ընդե ո՞նչ կծերանա, ո՞նչ էլ կմեռնի:

«Բա՛ս որ ըտենց ա,—միտք արեց էս տղեն ինքն իրան,—էս
պտի էթամ ֆալաթի կուշտը»:

էկավ մորն ասեց: Խեղճ մերը շատ դեմ ընկավ, մղկտաց, որ
չէթա՝ շէլավ, տղեն անկաջ շարեց, ասեց.—Պտի էթամ, որ պտի

¹ Գրառման ձեռագրի սևագիր օրինակում այս բառին հաշորդում է «Տեսե-
յալ նախադասությունը. «Ե՛լ ինչ աշբ պաեր, որ դիմանա, Ե՛լ ինչ սիրա պաեր, որ
շնդկտար՝ էս մոր ուրախությունը տեսնելուս», որը չնշված է Տ. նավասարդյանցի
ձեռքով (Ս. 4.):

Քթամ,— Տղեն ճամփի թադարեք տեհավ, հեննեն մնաս բարով
արեց, վե կացավ, ընկազ ճամփա:

Էթալիս մորն ասեց.— ԱՇ մեր, սաղ քու տունը, դուռը, շեմը,
շեմակալը ոսկի դառնա:

Ասելու բաշտան էն սհաթը սաղ տունը ոսկի կը լնի:

Էդ տղեն ա՝ կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, մի օր,
էրկու օր, իրեք օր, հճանի մի մեծ ծովի դրաղ. կտենա անց կե-
նալու ճար-իլլաջ չկա: Կնստի ծովի դրաղին ուժուր-ուժուր լաց
կը լինի: Մըն էլ ի՞նչ կտենա, ըհը՛: ծովի միջիցը մի եքա Զովէ դուս
էկավ:

— Տղա՛,— հարցրեց Զովէ, — խի՞ էս ըտենց ուժուր-ուժուր
քաց ըլնում:

— Բա ի՞նչ անեմ,— ասում ա տղեն,— ուզում եմ էս ծովը
անց կենամ, էթամ Ֆալաքի կուշտը, չեմ կարում. չեմ իմանում
ի՞նչ անեմ:

— Բաս որ ըտենց ա, — ասում ա Զովէ, — քեզ կանց կացնեմ
ծովի էն էրեսը, համա որ հասնես Ֆալաքի կուշտը իմ դա՛րտն էլ
նրան ա՛սա, ասա, որ ինձ ծովի ջանավարները շատ են շարշա-
քում, ինչիմիշ անում, թո՛ղ ասի տենամ՝ իմ ճարն ի՞նչ պտի ըլնի:

Զովէ տղին կդնի միջքին, մի սհաթումը կհանի ծովի էն էրե-
սը: Տղեն Զկան հեննա մնաս բարով կանի, իրա ճամփեն կրօռ-
նի, կէթա:

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, կհանի մի
ուժիշ ծովի դրաղ: Կտենա ըստե մի պառավ մի թաս ձեռին ծովի
շնուրը կոճում ա:

— Էդ ի՞նչ ես անում, ա՛յ նանի, — հարցնում ա տղեն:

— Սովը ուզում եմ ցամաքացնեմ, — ասում ա պառավը, — որ
ըստե թաղա քաղաք շինեմ, ես էլ էդ քաղաքի միջին մենծ դառնամ:

— Թահո՛ւ, էդ ծովը ե՛ր պտի կոճե՛ս, ցամաքացնե՛ս, որ
ըստե քաղաք քցես, դու էլ միջին մենծ ըլնես: — Ասում ա, թողում
էթում:

Էթում ա, էթում տենում ա հրես մի կազագ մի շոր ծառի ծերի
նստել ա:

— Բա՛րով կա՛զագ աղպեր, — կասի տղեն, — էդ ծառի ծերին
խի՞ ես նստել:

— Նստել եմ,— կասի լագլագը,— որ ըստե քաղաք դառնա,
ես էլ միջին մենծ ըլնեմ:

— Թահու,— կասի տղեն,— աշխատի, որ տենա էդ չոլ, յա-
բանի տեղը քաղաք դառնա, որ դու էլ էդ քաղաքի միջին մենծ
ըլնես:— Կասի, կտա, կանց կենա:

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիշը աստոծ գիտա, գշեր-ցե-
րեկ կէթա, մի օր, էրկու օր, մախլասի՝ մի շաբաթ կհասնի մի գեղը
կտենա, հրես հանդումը, մի տղա իրա մորը մի եղան հեննա լծեք
ա գութանիցը, վար ա անում:

Մեր ու տղա էս տղին որ կտենան, ամոթու չեն իմանա ի՞նչ
անեն:

— Բար'ազողում,— կասի տղեն դրանց:—
— Բա՛րով, ասսու հազար բարին,— կասեն:— Էդ ո՞ւր էս
էթում,— կհարցնեն:

— էթում եմ ֆալաքի կուշտը,— կասի տղեն:
— Որ էթում ես ֆալաքի կուշտը՝ ի՞նչ կընի իմ գանգատն էլ
տեղ հասցնես: Ես,— կասի,— մի խեղճ ուշշպար մարդ եմ, ֆալա-
քին իմ տեղակ աղաշանք արա՝ յա թող ինձ մի եղն էլ տա, որ կա-
րենամ գութան լծեմ, վար անեմ, յա թե չէ էս մի եղն էլ թող
առնի, որ իմ մորը ըսենց շարշարեմ:

— Ի՞նչ պտի ըլնի,— կասի տղեն,— քու դարտը ֆալաքին կա-
սեմ:— Կասի, կտա, կանց կենա:

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիշը աստոծ գիտա, կհասնի
մի ուրիշ ծովի դրաղ. կտենա մի մարդ էդ ծովի մեշտեղը նստել ա:

— Տղա՛, ո՞ւր ես էթում,— կհարցնի էդ մարդը:
— էթում եմ ֆալաքի կուշտը,— կասի տղեն:

— Տղա՛,— կասի էն մարդը,— որ էթում ես, գիտա՞ս, որ ըս-
տե աշխարփի վերջն ա, արևի դուս գալու վախտը ամեն բան հա-
լում ա. մե՛ղք ես, ջահել-ջիվան ես, ինձանից քեզ ամանաթ՝ արևի
դուս գալու վախտը գետինը փորա, միջին տափ կաց, որ լհալես.
Եր մեր կմննի, նո՞ր դուս արի, գնա քու ճամփեն: Ֆալաքն էլ հրես
հա՝ էն սարի փեշին ա:

Էս տղեն ա՝ ոնց որ էն մարդը ասել էր, ընենց էլ կանի. արևի
դուս գալու վախտը կբերի գետինը կփորի, կմննի մեշը, կկենա-
ընշանք արևը մեր կմննի, նոր ընդիան դուս կգա, կէթա իրա
ճամփեն:

Էդ ծովի զրադովը կէթա, կէթա, թամամ մի օր կէթա, կհասնի
մի սարի, կտենա էդ սարի փեշին մի Շեր գղղղված մարդ նստել ա,
դավթարը աղաթին բաց արած զիր ա գրում:

Էդ Շեր մարդը տղին որ կտենա, կհարցնի.— Տղա՛, ո՞ւր ես
էթում:

— էթում եմ Ֆալաքի կուշտը,— կասի տղեն:

— Ֆալաքը հենց ես եմ,— կասի,— ա'սա տենամ, ի՞նչ ես
ուզում:

— Ֆալաքը սաղ ըլնի,— կասի տղեն,— լսել եմ քու կշտին
մեռնիլ չկա, դրո՞ւմ ա:

— Հա՛, դրուստ ա, ո՞վ ըստե ապրի, ո՞նչ կմեռնի, ո՞նչ էլ. հա-
զար տարի էլ կկենա, չի իմանա՝ ծերությունը ի՞նչ զադ ա:

— Բա՛ս որ ըտենց ա, ես քու կշտին կկենամ. դարո՞վ ես:

— Դա՛րով եմ,— կասի Ֆալաքը,— խի՛ չեմ զարով. կենում ես
կա՛ց:

Էս տղեն ա՝ մի քանի հազար տարի կացավ Ֆալաքի կշտին,
ո՞նչ ծերանում էր, ո՞նչ էլ. ո՞նց որ էկել էր, ընենց էլ մնաց:

Համա իրա հերն ու մերը, իրա վաթանը ըսկի մտիցը շէր քցում:
Մի օր էլ, որ շատ միտք արեց, միտք արեց. «Զհա՞նդամը-գյոռը,—
ասեց, —թե կմեռնեմ, հո՞ իմ վաթանումը կըլնի, մեռնեմ էլ, հորնը-
մորս գերեղանի կշտին կթաղեն. լավ էն ա՝ էլի վե կենամ էթամ
մեր երկիրը»:

Օրեն մի օրը վե կկենա, կգա Ֆալաքին կասի.— Ֆալաքը սա՛ղ
ըլնի, բո՞լ ա ինչքամ քու կշտին կացա, հմի էլ ուզում եմ էթամ մեր
երկիրը, ընդե ապրեմ. ի՞նչ կասես:

— Դու զիտաս, — կասի Ֆալաքը, — ուզում ես՝ գնա՛: Մեղքն ու
վարձքը քու շինքը:

— Բաս որ ըտենց ա՝ կէթամ, — ասեց տղեն, — համա էրկու
խնդիրը էլ ունեմ, չիլնի՝ ասեմ:

— Խի՛ չիլնի, — ասեց Ֆալաքը, — ա'սա տենամ էդ էրկու խըն-
դիրքդ ի՞նչ ա:

— Ֆալաքը սաղ ըլնի, քու կուշտը գալիս, էկա, էկա՛ մի ծո-
վի ուստ էկա, էդ ծովի միջիցը մի Զուկ դուս էկավ, ինձ անցկաց-
քեց ծովի էն զրադը. հարցրեց. ո՞ւր ես էթում, — ասեցի. ոէթում եմ
Ֆալաքի կուշտը: Որ էթում ես, — ասեց, — ի՞նչ կըլնի իմ դարտն
էլ սրան ասես, բալքի մի ճար անի. ծովի շանավարները ինձ շատ

էն ինչիմիշ անում, քյոռլուղ տալի, մի Ֆալաքին հարցրա՛, տես իմ մեղքն ի՞նչ ա, որ էս ջանավարները ինձանից ձեռը չեն վեր ունում:

— Էդ Զկան գլխի միշին,— ասեց Ֆալաքը,— մի անդին քար կա. ո՞ր նրա գլուխը ճղես, էդ քարը հանես, ծովի ջանավարները էլ նրան ինչիմիշ չեն անի:

— Էդ հո՛ էդ. էկա, էկա, ճամփին մի գեղի ուստ էկա, տեհա հանդումը մի մարդ իրա մորը եղան հեննա լծել ա գութանիցը, վար ա անում: Էդ մարդը հարցրեց. ո՞ւր ես էթում: «էթում եմ,— ասեցի,— Ֆալաքի կուշտը»: Որ էթում ես,— ասեց, — ինչ կըլինի իմ դարտն էլ Ֆալաքին ասես, յա թո՛ղ ինձ մի եղն էլ տա, որ վար անեմ, յա թի շէ՝ էս մի եղն էլ ինձանից առնի, որ խեղճ մորա լարաբեմ:

— Էն մարդի դռան շեմքի տակին մենծ խաղինա կա,— ասեց Ֆալաքը, — Կէթաս կասես քանդի, հանի՛ հա՛մ իրա հմար եզ առնի, հա՛մ էլ մալ ու գոլվաթի տեր դառնա, գլուխը դինչ ապրի, ասսուն փառք տա:

Եննա Ֆալաքը հանեց իրեք ինձոր տվեց տղին. Թամրահ արեց, որ լավ պահի, մարդի շտա, թե չէ իրա ախոր խեր շիլնի:

Էս տղեն ա՛ Խնձորներն առավ, դրեց ծոցը, Ֆալաքին գլուխ տվեց, ընկավ ճամփա դպա իրանց երկիրը:

Էկավ, էկավ, շատու ու բիշն աստոծ վիտա, մի օր, էր կու օր, իրեք օր, մախլասի՛ մի շարաթ, հասավ էն գեղը, որ մի մարդ իրա մորը լծել էր գութանիցը, վար էր անում: Մտավ գեղը, հարցնելոն էն մարդին գտավ:

— Բար' աջողում, ա՛ղպեր, — ասեց տղեն:

— Ա՛յ բարո՛վ, ասսու հազա՛ր բարին, — ասեց էն մարդը, — ամեն ճամփեդ սալա՛մաթի: Է՛, Ֆալաքին տե՛հար, խնդիրքս ասե՛ցիր, թե չէ:

— Տեհա, ո՞նց չէ, ասեցի:

— Բա ի՞նչ ասեց:

— Ասեց՝ նրանց դռան շեմքի տակին մենծ խաղինա կա ֆոռած, թող քանդեն, հանեն իրանց հմար եղն առնեն, հարստանան, մալ ու գոլվաթի տեր դառնան:

Էն մարդը էս որ լսում ա, ալբիալը բահն ու թլունդն առնում ա, իրանց դռան շեմ ու շեմակալը քանդում: Քանդում ա, քանդում

ա, տենում ա, ըհը՝, հրես մի կարաս լիթը ոսկի ընդէ ֆորած, հանում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Խեղճ մարդը չէր խմանում ո՞նց շնորհակալ ընի էդ տղիցը, որ նրա ձեռովլը էդքամ խաղինի տեր դառան։

Էդ տղեն ա՝ էս մարդի հեննա մնաս բարով ա անում, իրա ճամփին բռնում, էթում էթում ա, էթում ա, մի օր, էրկու օր, իրեք օր, հասնում ա էն լազլազի կուշտը։ Հասնում ա ի՞նչ տենում՝ զորթ որ էն շոր, լեռ սարերը, ծորերը սաղ քաղաք ա գառե, էն լազլազն էլ էդ քաղաքի միջին մենծ ա էլի։ Կմնա արմացած, թե էս շուլ, յարանի տեղը ո՞րդիան քաղաք բնամ էկավ, էդ լազլազն էլ էդ քաղաքի միջին մենծ դառավ։ Ըստիան վեր ա կենում էթում էլ եդ իրա ճամփին, էթում, հասնում ա էն պառավի կուշտը, որ ծովի դրազին նստե, ջուրը կռնում էր։ Տեհավ դրուստ որ էն պառավը սաղ ծովի ջուրը կռնել ա, ցամաքացրե, տեղն էլ մի մենծ քաղաք ա շինե, ինքն էլ ընդէ մենծ դառե, էս որ կտենա, էլի կմնա արմացած Յալաքի արարմունքների վրեն։ Էլի կթողա, կէթա իրա ճամփին։ Կէթա, կէթա, շատն ու քիշն աստոծ գիտա, կհասնի էն ծովի դրազը։ Էն Զուկը ալրիհալը դուս ա գալի շըի էրեսը։

— Բա՛րով, Զուկ աղպեր, — ասում ա տղեն։

— Բա՛րով, ասուու հաղա՞ր բարի, — ասում ա Զուկը։ — Իմ զանդատը տեղ հասցրի՞ր, թե չէ, — հարցնում ա Զուկը։

— Հասցրի, — ասում ա, — Յալաքն ասեց. ոթու գիտի միջին մի անդին քար կա, որ էն քարը հանես, էլ ծովի շանավարները քեզ ինչիմիշ շեն անին։

Զուկը էս որ կլսի, էն սհաթը քյալին բաց կանի, անգին քարը միջիցը կհանի, կտա տղին. եննա տղին կդնի միջքին, կտանի կանցկացնի ծովի էն էրեսը։

Տղեն ըստե Զկան հեննա մնաս բարով կանի, կընկնի ճամփա դպա իրանց երկիրը։ Կէթա, կէթա, կէթա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, կհասնի իրանց գեղը, կմննի գեղը, է՛ս դիճը ման կգա, է՛ն դիճը ման կգա, դե՛ս կէթա, դե՛ն կէթա, սրա՛ն, նրա՛ն կհարցնի, իրանց տունը շի գտնի։

Վերջը. որ շատ ման կգա, մի ժեր մարդ ուսստ կգա, մոտ կէթա սրան, կհարցնի. — Բա՛րի, էս գեղում ոսկե տուն կար, ո՞ւր ա։

— Ա՛յ որդի, — կասի էդ ժեր մարդը, — էդ ոսկե տունը ըսկի իմ պապերը շեն տեհե, ես ո՞րդիան տենայի։ Մենակ հեքաթներում

լսել եմ, որ ըստե մի տուն ա էլե՝ սա՞ղ ոսկուց, սրանից սավայի էլ զադից խարար չեմ:

էդ տղեն մի քանի վախտ մնաց իրանց գեղումը, շատ հարց ու փորձ արեց, համա իրանց տանիցը մի դրուստ չուղար շիմացավ. վերջը միտք արեց՝ էլի էթա ֆալաքի կուշտը, ընդե ապրի, ծամփի թադարեք տեհավ, վե կացավ փոր-փոշման, դառը-տիուր ընկավ ճամփա:

Գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, հասավ էն ծովի դրազը: Սովիցը էլի էն Զուկը դուս էկավ, տղին անցկացրեց սաղ-սալամաթ ծովի էն էրեսը:

Էս տղեն ա՝ կէթա, կէթա, կհասնի էն պառավի քաղաքը: Կտենա էն պառավը է՝ որին ա, է՝ որին ա, որ էլ շէլած, էնքա՞մ տ պառավե, էնքա՞մ ա ձեռից-ոտից ընկե, որ էլ շի կարում տեղիցը ժաժ գա, հենց միալար գոռում ա.— Ա՛ստոծ սիրողը ինձ մի զթալ շուր տա, ես մեռա՝, էրվե՛ցի, փոթոթվե՛ցի:

Էն սհաթը տղեն ջիրիցը մի Անմահական խնձոր ա հանում, տալի պառավին, Պառավը ուտելու բաշտան ջահելանում ա, ըլ-նում տասնըհինգ տարեկան աղջիկ, էն դիմը կանում: Տղեն թողում ա ըստե, իրա ճամփեն բռնում, էթում, էթում ա, էթում ա, էթում ա լազագի քաղաքը: Տենում ա լազագը էն-քա՞մ ա ծերացե, որ ծառիցը վեր ա ընկե, մի թեր կոտրել ա, վրեն ուժ շկա, որ վե կենա, եննա մի հանքի ծվում ա.— Ա՛ման, ա՛սսոս սիրուն, ես մե՛ռա, մի կում ջո՛կու:

Տղեն էս որ տենում ա, էլի ջիրիցը մի Անմահական խնձոր ա հանում, տալի լազագին: Ուտելու բաշտան լազագը ըլնում ա մի նոր ճվից դուս էկած լազագի ճուտու: Տղեն լազագին թողում ա, իրա ճամփեն բռնում, էթում:

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էն մեր ու տղի կուշտը, որ հանդումը վար ին անում. տենում ա նրանք էնքա՞մ են ծերացե, էնքա՞մ են ծերացե, որ տեղներիցը չեն կարում ժաժ գա, հենց միալար գոռում են.— Ա՛ստոծ սիրողը մեզ մի կաթ շուր տա, մենք մե՛ռանք, էրվե՛ցինք:

Տղեն էս որ տենում ա, սիրտը շատ ա մոմում. ջիրիցը հանում ա մնացած Խնձորն էլ, տապակ անում, տալի նրանց, որ ուտեն: Ուտելու բաշտան մեր ու տղա ջահելանում են, ըլնում ոնց

որ մորեն մին: Տղեն էլ է՞ն սհաթը ըստե վեր ա ընկնում, ֆողին
տալի: Ընդուր էր Յալաքը ասե. «Խնձորները ուրշի շտաս, թե չէ
ախրդ խեր շի՛նիս: Դո՛րթ որ, ընևնց էլ էլավ:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ ասիւ
ավողին, մինն էլ՝ անկաշ դնողին:

